

Ռ. ՊԱՏԿԱՆԵԱՆԻ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Տպագրութեան յանձնելով մեր ազգային բանաստեղծի նամակները՝ հարկ ենք համարում տալ մի քանի բացատրութիւններ :

Մեցեալ դարու եօթանասնական թւականներից սկսած Ռ. Պատկանեանը ամբողջովին նւիրեց իր սիրած մանկավարժական գործունէութեան : Սա նրա ասլրումների այն շրջանն էր, երբ նա դրառւած էր «մատաղ սերնդի պատրաստութեան գործով», ինչպէս յաճախ ասում ու գրում էր իր բարեկամներին : Իր հայրենի քաղաքում՝ Նոր-Նախիջևեանում իր կնոջ տիկ. Օլգայի հետ միասին նա բացել էր «հայ տղայոց օրինական պանսիոն», գրում էր մանկավարժական դրքոյկներ, որոնց մէջ մեծ տեղ էր տալիս եւ հայ երգին, վառնդի հաւատացած էր, որ «մանկական հասակից հայ երգը պէտք է ամբանայ երեխայի սրտի մէջ» : Բայց մի քանի տարիներից յետոյ, արդէն չէր թաղցնում իր մտերիմներից, որ մանկավարժական գործունէութիւնը Նոր-Նախիջևեանում նրան չէր գրհացնում : Նախ՝ Հայաստանից հեռու մեկուսացած քաղաքի անպարէզը նեղ էր թւում . յետոյ՝ տիրող քաղքենի բարոյական միջավայրը իր անօրեայ, փոքրիկ քաղաքին յատուկ միակերպ կենցաղով, մանր բամբասանքներով ու սրանց նման ուրիշ անախորժութիւններով — չէին կարող ատող եւ մղիչ ազդակ լինել բանաստեղծի ասլրումների ու երազների համար : Մեծ մտահոգութիւն էր կազմում եւ այն՝ ինչ բանաստեղծը տեսնում էր ամէն օր եւ ինչ շատերի աչքից խուսափում էր :

Նոր-Նախիջևեանը շրջապատող ոռւս մշակոյթը մեծ նւաճումներ էր անում եւ անտեսանելի, շատ անգամ եւ ակնյայտնի կերպով՝ մտնում էր կղզիացած հայ փոքրիկ դաղութի ընտանիքի մէջ եւ կաթիլ կաթիլ ասլագայնացնում նրան : Բայց եթէ Ռ. Պատկանեանի սուր, զննող աչքերից այդ երեւոյթը չէր խուսա-

փում, նա զգում էր, սակայն, որ մեռակ ինքը ոչինչ չի կարող անել: Յաճախ վրդովւած՝ փորձում էր այդ երևույթի մագին չմտածել, բայց զգում էր, որ իր խռոված հոգին ու այդ մշտական թունաւորւած տրամադրութիւնը արգելք են լինում նրան եւ իր միւս սիրած գործով՝ գրական ստեղծագործութեամբ զբաղւելու:

Եւ Ռ. Պատկանեանը երազում է տեղափոխւել մի այնպիսի վայր, ուր ոռւս մշակոյթն ու կենցաղը հաղիւ թէ շուտով մուտք գործել կարողանային եւ, որ զլիսաւորն է, այդ վայրը լինէր «հայութեան ծոցը»: Այդպիսի վայր բանաստեղծի կարծիքով, կարող էր լինել միայն Էջմիածինը: Արդարեւ Ռ. Պատկանեանը իր բարեկամների միջոցով սկսում է հող սպտրաստել, որպէսզի Էջմիածնի դպրոցի վարչութիւնը հրաւիրէ իրեն իբրեւ ուսուցիչ:

1875թ. գրած նամակում, որ բերում ենք ստորեւ, նա խօսում է թէ՛ իր պայմանների մասին եւ թէ՛ համեստօրէն առաջարկում է նաեւ իր գրական աշխատակցութիւնը «Արարատ» ամսագրին: Յայտնի է, որ Ռ. Պատկանեանի Էջմիածին տեղափոխւելու ծրագիրը չիրականացաւ: Մենք լսած ենք բանաստեղծի մտերիմներից, թէ զլիսաւոր արգելքը այն էր, որ Էջմիածնում վախենում էին Ռ. Պատկանեանի ներկայութիւնից, նրա չափազանց զննող աչքերից: Չպէտք է մոռանալ նոյնպէս, որ Ռ. Պատկանեանը հրաշակւած էր ոչ միայն որպէս քնարերգակ եւ հայրենասէր բանաստեղծ, այլ եւ իբրեւ երգիծարան: Անշուշտ, Էջմիածինը ընդունում էր «Արաքսի Արտասուք»ի երգչի բարոյական հեղինակութիւնը, բայց վախենում էր Ռ. Պատկանեանի սուր հեգնանքից եւ տնողոք ծաղրից: Գուցէ Էջմիածնի վանականներից շատերը իսկապէս իրաւունք էլ ունէին վախենալու «Սիւլիւկ»ի սուր ու յաճախ անխնայ ոտանաւորներից եւ արձակից: Եւ ո՞վ կարող էր երաշխաւորել, որ հաստատելով Էջմիածին, «Սիւլիւկ»ը չծաղրէր ե՛ւ վանականներին՝ մէկի տգիտութիւնը, միւսի՝ անգործութիւնը, երրորդի «եսը», չորրորդի չարախօսութիւնը, հինգերորդի փողատիրութիւնը եւ այլն: Բանաստեղծի մտերիմները պատմում էին, թէ իբր Ռ. Պատկանեանը յաճախ կրկնել է՝ «վախեցան, որ Էջմիածնի հանգիստ կեանքը քար ու քանդ անեմ: Ի՛նչ տրամ, բայց եւ այնպէս՝ իմ իղձս է, որ մի օր Էջմիածնում ինձ թաղեն»: Էջմիածինը զանազան պատրւակներով՝ այնպիսի պայմաններ է առաջարկում Ռ. Պատկանեանին, որ նա, ոչ մի դէպքում չէր կարող ընդունել:

Ռ. Պատկանեանի 1875թ. գրած ամսակը.

Մտերիմ եղբայր Տէր Խաչատուր.

«Ձեր նամակը ստացայ. գերապատիւ Վահրամ վարդ. Մանկունու նամակն եւս, առ Ձեզ, կարդացի: Իմ պատասխանը նոյնը կը լինի, ինչ որ ես Ձեզ բերանացի եւ քանիցս ասել էի: Իմ ցանկութիւնս դէպի էջմիածին երթալու՝ ո՛չ այլ ինչ է, եթէ ոչ մօտիկ լինել իմ ընկի հայրենակցաց եւ գտնել ծոցումն իմ սուրբ հայրենեաց: Ահա՛ իմ գլխաւոր պահանջմունքը՝ փոխարէն իմ այն աշխատութեանց, որն պիտի կլանէ իմ բոլոր անձնը: Ես ինքս ինձի նշանակում եմ այնքան ոռճիկ, որքան որ կը բաւէ իմ ընտանիքը, ո՛չ գեղխութեամբ, ո՛չ ճոխութեամբ եւ ո՛չ փաթեամբութեամբ, այլ չափաւորութեամբ ապրելու համար, վասնզի՝ չքաւոր մարդը մտաւորապէս աշխատել չի՛ կարող. «աղքատութիւնը յանցանք է, այլ ամենայն յանցանաց մայրն է», այս՝ փորձած ճշմարտութիւն է: Իմ սիրած առարկաներն (դաստիարակութիւնները) են, բնական պատմութիւն, թւարանութիւն (ստորին եւ ճիշին. վերնոցն մէջ տակաւին ոյժս փորձած չեմ, ուրեմն, մեծամեծ արգասիք խոստանալ չեմ կարող), այլեւ՝ պատմութիւն (ընդհանուր եւ ուսաց) եւ ուսաց լեզու: Բայց ես չեմ պահանջում, որ այս ամէն յիշած առարկաներն տրելն ինձ, ո՛չ. ճիշին թէ ինձ այնքան աշխատանք տային, որ կարող լինէի էջմիածնայ վարդապետանոցէն ստանալ տարեկան 1500—1750 մանէթ: Այժմ դառնանք Արարատ լրագրին: Ապաքէն Ձեզ յայտնի է, որ գրիչն իմ կենաց տարրն է, կեանքիս ամենախաղաղ պահանջումն է. ես առանց գրելու կենալ չեմ կարող:

Ի՞նչ ասել կուզէ, որ Ակադեմիայէն ազատ ընդունեալ ամբողջութեամբ նւիրած կը լինին Արարատին, եթէ միայն նա կարժանացնէ ինձ իւր էջերի մէջ հիւրընկալութիւն ցոյց տալ... — Ես ա՛յն ժամանակ վեհափառին կը դիմեմ, երբոր ըստ ամենայնի ես ա՛յն ժամանակ վեհափառին կը դիմեմ, որ խնդիրքս ոչինչ կերպիւ չի մերժել: Դրա հաւաստի կը լինեմ, որ խնդիրքս ոչինչ կերպիւ չի մերժել: Դրա համար պէտք էր մերձաւոր մեծաւորների կարծիքը եւ մտերիմ, անխարդախ յօժարութիւնը ստանալ: Բարեհաճեցէք, պատական անխարդախ յօժարութիւնը ստանալ: Բարեհաճեցէք, պատական հայր եւ եղբայր, այս նամակի իմաստը եւ բովանդակութիւնը հաղորդել գերապատիւ հայր Վահանին:

Մնամ Ձեր միշտ մտերիմ եղբայր

Ռ. Պատկանեան

Handwritten title or header text at the top of the page.

Main body of handwritten text, appearing to be a detailed account or report.

Այսինքն յարմար էր ձեռք բերել ձեռնարկը
 որ զիջելով իջեալ շարքէն, վառելի և քաղցր
 հանգիստ տուցիւ ինքնուրոյն զգացող
 ինքնին, որ ձեռք բերելու արդար յարմար
 քան յիջելու արդարեւ, ինչ որպէս ինքնուրոյն
 ինքնին ինքնուրոյն զգացող ինքնին: — Եւ
 այսինքն ինքնուրոյն զգացող ինքնին
 որ ինքնուրոյն զգացող ինքնին ինքնուրոյն
 ինքնին ինքնուրոյն զգացող ինքնին:

Երկրորդը, որպէս ինքնուրոյն զգացող
 և ինքնուրոյն զգացող ինքնին ինքնուրոյն

Ընդ ձեռք ձեռք ինքնին ինքնին
 ինքնին ինքնին

18-19
 11

Ինչպէս արդէն վերեւ յիշեցինք, Էջմիածնի պայմանները անընդունելի էին, եւ Ռ. Պատկանեանը հրաժարուամ է Էջմիածին տեղափոխելու երազից: Դժուար է ասել, արդեօք մեծ բանաստեղծի հետագայ տարիների ստեղծագործութեան տեսակէտից լա՞ւ եղաւ թէ վատ, որ 1875թ. նա չտեղափոխեց Էջմիածին: Յամենայն դէպս, եթէ աչքի առաջ ունենանք Ռ. Պատկանեանի տաք խառնածքը, մի քիչ անհանգիստ բնաւորութիւնը, հազիւ թէ Էջմիածնի միապաղաղ մթնոլորտը իր յատուկ մտայնութեամբ՝ նպաստաւոր լինէր բանաստեղծական մեծ ներշնչման համար: Իսկ մնալով Նոր-Նախիջևեան, ռուս-տաճկական պատերազմի առաջին օրերից՝ նա կերտում է իր հռչակաւոր «Աղաւ Երգերը», հետագայում, ութսունական թւականներին էլ հրատարակում է հինգ արձակ վէպեր, բաղմաթիւ պատմածքներ ու «Նախիջևեանի Բնարը» քերթիծական հատորը:

Գալով միւս անտիպ նամակներին՝ պարտք ենք համարում բերել հետեւեալ բացատրութիւնները: Ռ. Պատկանեանի նամակները կրում են 1879—80 թւականները եւ ուղղւած են Էջմիածին՝ Վահրամ եպիսկոպոս Մանկունուն*):

Նամակները գրւած են Նոր-Նախիջևեանից եւ դիտաւորապէս տեղային Հոգեւոր Դպրոցի, հոգաբարձութեան ու դպրոցին պատկանած տպարանի հարցերովն են դրաղւած: Իր ժամանակին Ռ. Պատկանեանը պատերազմ էր յայտարարած թէ՛ Հոգեւոր դպրոցի հոգաբարձութեան ու Խաչ. քահանայ Զառիֆեանին (դպրոցի կրօնուսույց), եւ թէ Նոր-Նախիջևեանի եւ Բեսարաբիոյ թեմի առաջնորդ Մակար եպիսկոպոսին (հետագայում կաթողիկոս): Նամակներում ակնարկներ կան եւ իր միւս հակառակորդների մասին՝ Աղափիրեան վարդապետի եւ Փիլիսոս Վարդանեանի, որոնք կարճ ժամանակով ուսուցիչ կամ անսուչ եղան Հոգեւոր դպրոցում: Ինքն ըստ ինքեան կոչւը անհաւասար էր. մի կողմից քաղաքի ազա-հոգաբարձուները եւ սրանց ղեկավար Զառիֆեանը, որ վայելում էր Մակար եպիսկոպոսի ամբողջ հովանաւորութիւնը, միւս կողմից՝ մի մեկուսացած ուսուցիչ, որ միայն մի դէնք ունէր — իր գրիչը:

Ռ. Պատկանեանը իր նամակներում խօսում է երկարօրէն «դպրոցի տպարանի» մասին: Երբ Դըլմի Խալիբեան վարձարանը փակւեց, այնտեղից Նախիջևեան տեղափոխեցին եւ եր-

*) Այս նամակները օգտագործել ենք Փարիզի Նուպարեան Մատենադարանից, որի վերատեսչութեան եւ դրադարանապետ յարգելի Ա. Ատոնեանին յարտում ենք մեր անկեղծ շնորհակալութիւնը: Ռ. Բ.

բեմն «Մասեաց Աղանի» ամօթադիրը տպագրող տպարանը, որը յանձնեց իբրև սեփականութիւն Նոր-Նախիջեանի Հոգեւոր դպրոցին (ապագայ թեմական դպրոցը)։ Այդ տպարանով բացի Ռ. Պատկանեանից, ուրիշ հետաքրքրուող չկար։ Իր երիտասարդական օրերից սկսած մեր բանաստեղծը սիրահար էր տպարանական դորժին։ Երբ դեռ վաթսուեական թւականներին ապրում էր Պետերբուրգում, Ռ. Պատկանեանը մեծ զոհողութիւններով ձեռք էր բերել սեփական մի տպարան, որտեղ եւ տպեց մի շարք մանկավարժական գրքոյկներ, երգարաններ, թարգմանական եւ այլ գրքեր։ Նոյն տպարանումն էր տպւում եւ նրա «Հիւսիս»ը։ Բայց երբ վաթսուեական թւականները վերջերից հաստատուեց իր հայրենի քաղաքում, նա, ինչպէս ինքն էր ասում՝ «որք է զգում իրեն անոանց տպարանի»։ Բացի իր մանկավարժական գրադմունքներից՝ նրա իդէերից մէկն էլ եղել է ունենալ ձեռքի տակ մի տպարան, որ կարողանայ շարունակել հրատարակել մանկավարժական եւ ընթերցանութեան համար հայերէն գրքոյկներ։ Եօթանասնական թւականների վերջերում նա վճռել էր մի ուրիշ բան էլ, որ միայն իր մտերիմներին էր յայտնել. այն է՝ հրատարակել շաբաթաթերթ կամ ամսագիր, որի մի մասը պէտք է լինէր տեղական բարբառով, միւսը՝ գրական աշխարհագրաբանով։ Այն հարցին, թէ ո՞վքեր են լինելու թերթի աշխատակիցները՝ Ռ. Պատկանեանը կէս-լուրջ, կէս-հեղձօրէն պատասխանում էր՝ «թերթի աշխատակիցներն են՝ «Սիւլիւկ»ը, «Սըճի աղան», «Ճանկով մամուկը», «Պամչին» — բոլորն էլ Պատկանեանի ծածկանունները։

Բնական էր, որ մի այնպիսի «դիւանադէտ», խելացի եւ խիստ խորամանկ, բայց ոխերիմ թշնամի, ինչպիսին էր Չառիֆեան քահանան, ամէն ջանք թափէր, որ դպրոցի տպարանը չյանձնւի Ռ. Պատկանեանին. տալ նրան տպարանը — ասել է տալ թերթ հրատարակելու նիւթական կարողութիւն։ Իսկ թերթը Ռ. Պատկանեանի ձեռքում՝ մահացու հարւած կը լինէր թէ Չառիֆեանի եւ թէ սրբ համախոհների համար։ Ու երբ հողաբարձական ժողովին հողաբարձուներից մէկը այն միտքն է յայտնում, թէ աւելի լաւ է համեստ վարձով տպարանը տալ Ռ. Պատկանեանին, քան թէ տառերը փչացնել փոշիների տակ, Չառիֆեան քահանան բացառանչում է. «Ոե՞ւ իք ի՞նչ է. տեսնւած բա՞ն է, որ ամին պոսթանի մէջ թողնեն»։ Ու տպարանը վարձով են տալիս մի հրեայի...

Ահա՛ Ռ. Պատկանեանի այդ անտիպ նամակները, որոնք մեծ չափով արտայայտում են այդ հարցերի շուրջ եղած խնդիրները։

Նամակները ուղղւած են Վահրամ եպ. Մանկունիին, որ Գէորգ Դ. Կաթողիկոսի աջ բազուկն էր:

Ն. Նախիջեւան. 1879. 3. նոյեմբերի.

«Մակար եպ. ես անձամբ չեմ ճանաչում. բայց նորա վրա pro եւ contra շատ բան լսել եմ: Իմ նորա մասին եղած կարծիքը այս է. Մակար եպ. խորամանկ մարդ է. եթէ ոչ իւր նիւթական շահը, գէթ իւր անձնական պատիւը ու փառքը (պատուապիրութիւն եւ փառասիրութիւն գովունի յատկութիւններ չեն, մանաւանդ կրօնաւոր մարդու համար) դերադասող է ամենայն ինչ զգացմունքի եւ բարիքի, թող թէ լինէր այդ զգացմունքը ազգային եւ այդ բարիքը՝ հայրենեաց: Մեր օրերումը խորամանկութիւնը այն սիրալի գործերը չի ծնիլ, որն որ, թերեւս է՛ր երբեմն աշխարհիս կոյր ժամանակն ծնել է: Մեր դարը լուսաւորութեան, դէպք նպատակը ազատօրէն բաց ճակատով ձգտող դար է. ամենայն ժութ եւ ստորերկրեայ ճանապարհ, ամենայն սքողեալ հնար արհամարհելի են մեր օրերում. մեր դարը եւ ներկայ մարդկութիւնը սիրում է ազնիւ ճակատ, բաց սիրտ եւ պարզած դրօշակ եւ վերջնոյս նշանաբանը որոշ եւ պարզ գործ:

Մակար եպ. խորամանկ է, ուստի նորա ուժին, ընդունակութեան եւ քաջագործութեան ոչ ոք չի հաւատար. ոչ ոք իր ինչքը եւ գործունէութիւնը չի աւանդիլ նորա դողդոջուն ձեռքը եւ դանդաղող խելքին:

Կայ հանդամանք, երբ Քեօռ Օղլուն առաւել օգնւտ կը բերէ, քան թէ յաղօթս կանխող մի ճգնաւոր:

Մակարը իր ազգային գործունէութիւնը շատ ձախտողակի եղանակաւ սկսեց.....

Ձեր վրա սր. պարտականութիւն կայ վեհափառի ուշադրութիւնը դարձնել հետագայ պարագայի վրա, որ 100 հայ մանկունք երթեւեկում են Ռուսաստանի դպրոցներն եւ 100էն աւելի ուրիշ հայ մանկունք թափառում են Ռուսաստանի այլ քաղաքներէ վարժատուններուն, որոնք այս օրւայ օրս անշուշտ Ն. Նախիջեւանի Հոգեւոր Դպրոցի աշակերտներն պիտի լինէին, եթէ ինքը թշուառ Հ. դպրոցը ազատւած լինէր Չառիֆեանի, Վարդանեանի, Ալաճալեանի եւ վերջնոյս արբանեակների մագիլներէն:

Ազնիւ բարեկամ, մի անգամ առ միշտ լծացած եղէք, որ Նոր Նախիջեւանի ժողովրդի բերանը փակւած է, նորա ազատ կամքը խլւած է, նորա կարծիքը կաշկանդւած է:

Ասացէք վեհափառին, որ միայն նորա հօր աջը կարող է լուծանել այդ կախարդական կապերը...»

Նոր-Նախիջեւան. 22 նոյեմբերի 1879.

Սրբազան Հայր, ազնիւ եղբայր.

«Ձեր ուշադրութիւնը կը դարձնեմ մի այլ առարկայի վրա, որն ոչ պակաս քանց շատ ուրիշները, ազգային դործ է:

Ահա 4 տարի է, որ եկեղեցապատկան տպարանը մնում է անգործադրելի. մամուլների նուրբ պողպատեայ մանր մասունքը ժանդոտում են. ձուլած արձեւեայ տառերը գետին գետնափորների ախոռների մէջ ձգած օրէ օր ժանդոտում են եւ փոշիանում են, իսկ որ գլխաւորն է՝ 25-30 հազար ուրբի դործարանը եւ նորա տալու տոկոսը կորչում են, չքանում են... ցաւ է ասելն՝ այդ ամենը կատարում է ոչ տղխութեամբ կամ անհոգութեամբ քանի մի հոգաբարձուների (որոնց անունները արդէն յիշել եմ եւ ստորեւ կը յիշեմ), այլ նոցա չարամիտ գիտակցութեամբք եւ չարախնդութեամբք... Ասել եմ եւ դարձեալ կասեմ՝ քանի որ տ. Ս. Չառիֆեանը, Վարդանեանը եւ Սալիբեանը պիտի մնան հոգաբարձուք հոգեւոր դպրոցին, ամէն ինչ պիտի քայքայի, կջրծանւի, ժանդոտի ու հող դառնայ: Այն չէ՛ դարմանալին, որ չարք իր չարութիւնը անում է. դարմանալին այն է, որ Սբ. Աթոռը իւր հովանաւորութեան տակ առել է ազգիս կործանիչներուն: Մի՞թէ վեհափառը պիտի սպասէ այն չարաշուք օրան, երբ «բանը բանէն անցած կը լինի» եւ օգնութեան հնար մնացած չլինի այլ եւս: Սրբազան Հայր, ափսոս է 25 հազարեայ ժողովուրդը որոց միակ կապն է Սբ. Էջմիածնայ հետ եկեղեցին եւ դպրոցը... աւա՛ղ, այդ կապերը փառել են, շտապեցէք օգնութեան:

Կրկնում եմ իմ ցանկութիւնը.

Անցեալ տարի եւ մտադիր էի յիշեալ տպարանը կասրալու աննելու վրամ, եւ տեղացի ունեւոր եւ բարեմիտ մարդիկ էի գտել, որ յօժարակամ պատրաստ էին ինձ օղնել տպարանը ոտքի կանգնեցնելու, տուն վարձելու, գրքեր տպել տալու, մինչեւ անգամ (ազգիս ներկայ պայմաններին նայելով) լրագիր հրատարակելու, եւ այլն: Այս բանս իմանալով քանի մի չարամիտք, (հասանական է, որ վերոյիշեալքը կամ նոցա համախոհքը), օգուտ քաղելով տէրութեան մէջ տարածւած դաղտնի ընկերութեան չարազործութեամբք, անամուս եւ անստորագիր ամբաստանութեան անամակներ գրեցին վրաս նահանգապետ Դուռնավոյին, հաւատացնելով իբր թէ ես «անյուսալի անձն եմ», եւ նա թոյլ չի տուա ինձ տպարան

բանալու: Այս մասին ես երկարօրէն պէտք է խօսէի վեհափառի հետ. բայց տեսնելով արդար ծերունին քան զիս հազարապատիկ վշտացած, լռեցի. եւ փոխանակ նորանէն օղնութիւն եւ մխիթարութիւն խնդրելու, ինքս ամէն օր մխիթարում էի եւ ցուակից էի լինում նորա բիւր բիւրոց ցաւերում... Ինչ եւ իցէ ես խնայեցի վեհափառի հանգստութեան օրերը իմ դանդառնեցողը թունաւորել, բայց այժմ տեսնում եմ, որ լուութիւնս եւս մի առաքինութիւն եւ խոհեմութիւն չէ: Եթէ պատեհ միջոց գտնէք, խնդրեմ, ասացէ՛ք նորան յետադայս. թող դէր Օղեսոսայի պատերազմական շրջանային նահանգապետին կոմս Թօթլէպէնին, որ թոյլ տայ ինձ անպարտ բանալու. թող վեհափառը համոզէ եւ երաշխաւոր լինի, որ ես երբեք տէրութեան դէմ ոչ խօսքով եւ ոչ գրչով մի չար բան ձեռնարկած չեմ. եւ եթէ կամենայ իմ վրա արդար կարծիք ունենալ՝ թող հարց ու փորձ անէ Ն. Նախիջեւանի քաղաքապետին կամ դումային (ք. խորհրդի անդամներին), որոնք ինձ ի մօտոյ ճանաչում են, եւ ոչ թէ Եկատերինասլավի նահանգապետ Դուռնովոյին, որ հազարէն մի դալիս է մեր քաղաք միայն այս ու այն հայի թշնամի աղաներու տուն, նոցա հետ քաղաքացիի փողով տւած ճաշն է լախում եւ շամփայն է լախում: Երբ Ալաճալեանն էր քաղաքապետը՝ ոչինչ կասկած չի կայ, որ իր համարեւ թ. Սաչատուր Զարիֆեանի եւ Սալիբեանի դրդամբ չարախօսութիւններ արած լինի Դուռնովոյին իմ մասին, որոյ աղագաւ նա թոյլ չի տւեց ինձ տպարանի բացումը: Ես վստահ եմ, որ խոհեմ թոթիպեներ վեհափառի խօսքը հասցեստով եւ ուրախութեամբ կը կատարէ. եւ եկեղեցապատկան տպարանը շատ շուտ կը սկսէ տալու ազդիս նիւթական եւ բարոյական օգուտներ»:

1880 յունւար 5. Նոր Նախիջեւանից դրած նամակի մէջ Ռ. Պատկանեանը նորից վերադառնում է տպարանի հարցին.

«Տպարանը ոչ միայն, ինչպէս անցեալ նամակիս մէջ յիշել էի, անդորձ կեցած է խոնաւ շտեմարանների մէջ, այլ եւ դպրոցի հողաբարձունների յիմարութեամբ եւ խորամանկութեամբ, արարդիւն եւ անվերջանալի դատի մէջ է, որն չվերջացած՝ ում եւ իցէ վարձու տրւել չի կարող, եթէ այդ կնճիռն վեհափառը՝ ըստ օրինակի Մակեդանոցուոյն, թրով չի կտրէ...»

Աւելի քան 300 փուղ տառեր՝ դանդաղան մեծութեան, դանդաղան լեզուների, միջոցներ, տողեր եւ այլն, անձամբ, թափած են, քրտան փողի եկած, ամենից վրայից էլ անձրեւ սրկած, այս ամենին կոչուած են բանիւրանի մետաղեայ դէպեր, որն մի փոքր

սարքի կարգի բերելու համար 6 ամիս ժամանակ 3-4 գրաչարք օր ու գիշեր պիտի աշխատեն. նոյն եւ կամ աւելի վատթար վիճակի մէջ են 3 մամուլները, որոցմէ մինը՝ չունի տակի տառանաւոր կողը, որն միջակտուր բեկւած է... Խօսքս ինչ երկարցնեմ՝ այստեղ բարեմիտ անձանց կարծիքով այժմեայ անելիքն այս է, որ վեհափառը ինչպէս հ. դպրոցի, այնպէս եւ յիշեալ տպարանի խնդրոյ մէջ ինքնիշխանաբար շարժէ, առանձին կոնդակաւ, յանուն Հոգեւոր կառավարութեան (մի կողմ թողնելով Մակար Ա. եպիսկոպոսի միջամտութիւնը) հրամայէ յանձնել տպարանը որոյ վրա եւ հաւատ ունի: Իմ միջոցներս սոքա են. 1) բարեկամքս ունին տպարանի համար նշանակած 2000 մանէթ առձեռն պատրաստի փող, 2) պ. Պօղոս Խաթրանեանն պիտի տայ ինձ տպարանի համար պէգէսթէնի լայնարձակ կրպակներէն մինը, մի տարի ժամանակաւ ձրի, 3) կայ մի ընկերութիւն Երիտասարդաց, որ հայերէն շարքաքարքար պիտի հրատարակէ տպարանին մէջ...»

Ռ. Պատկանեանը իր պայքարը սկսել էր դպրոցի վերատեսչի եւ հոգաբարձուների դէմ. ո՛չ միայն իր հայրենի քաղաքում, այլ եւ «Մշակ»ում. այսպէս իր 1880թ. 5 յունւար նամակում նա գրում է. «... Ես բարի համարեցի խօսիլ ո՛չ դադտուկ, այլ բացարձակ, ո՛չ մի անձին եւ այն իմ բարեկամին, այլ ամբողջ հայ ազգին, ոչ մի քանի մարդոց ականջներին փախալ կամ գրպարտել, այլ հրապարակաւ ամբաստանել, որպէսզի ականջ ունեցողն լսէ եւ աչք ունեցողն տեսնէ. «Մշակ» 225 համարի մէջ ես խօսեցայ վերատեսչի եւ նորան աւանդած դպրոցի մասին: Փոյթ ընդ փոյթ բ. Սրբազնութիւնը կը կարդայ նոյն լրագրի մէջ մի այլ յօդւած, ուր, հակիրճ, բայց ազդու եղանակաւ խօսել եմ տեղւոյս Հ. դպրոցի հոգաբարձուների մասին, ցուցնելով նոցա ըողոր անպիտանութիւնը ընտրւած օրերէն ցարդ: Թէ քաղաքապետը եւ թէ տեղւոյս ընտիր ժողովրդի կարծիքն ու ցանկութիւնը այս է, որ այսուհետեւ վեհափառը գէթ վերաբերմամբ նախիջեւանի ներգործէ իր իշխանութեամբ. ինչո՞ւ ասում են, նա դայթ ի դայթին պիտի ընթանայ այն ասպարիզի մէջ, ուր նա ոյժ եւ անկապար իրաւունք ունի, աներկիւղ եւ համարձակ շրջելու. եւ ինչո՞ւ նա պիտի խորհրդակցէ քանի մի խելացիորների, լրբերի եւ ասերասանների հետ ... «զատն ձեւացողին դայթերը կուտեն».

միտքը ձգեցէք նորին վեհափառութեան: Անընդունակ, կեղտոտ եւ տղէտ անձինք տեղւոյս մի քանի սրիկաների ճնշման տակ, ընտրւած են վեհափառի հիմնած դպրոցի հոգաբարձունք. իսկ

Մակար Ա. եպիսկոպոսը իւր ներկայութեամբ սրբազործելով այդ խարբախ ընտրութիւնը, ոչ այլ ինչ նպատակ ունէր, եթէ ոչ «կարծեցած հօրնների խաթրին չդիպչել», որպէսզի իր դերքը ամբանայ. Մակարը ոչ բարեսիրտ կրօնաւորի անուն վաստակեց եւ ոչ խելօք մարդու. ոչ յիմարներէն սիրւեցաւ եւ ոչ խելօքներէն յարգւեցաւ. շատ արժան գնով կաշառւեցաւ. երկու երեք համատամ ճաշերով եւ գինեկտ սեղաններով խաբեցին նորան տեղիս «սուտ աղաները» :»

Ձերդ Ռ. Պատկանեան

Նոր-Նախիջեւան 1880. Յունւարի 7.

Սրբազան Հայր, ազնիւ եղբայր

«Ձեզ յայտնի է, որ վեհափառի ցանկութիւնն է, որ ամէն եկեղեցի իւր առանձին ծխական դպրոցը ունենայ եւ որն ինչպէս գիտէք, հեշտութեամբ չէ էագործւում. «եղածներն բարեկարգել եւ ո՛չ փակել, եւ նորերը բանալ» այս է նշանաբանը մեր լուսաւորեալ Հայրապետին. եւ այսպիսի սրանձալի ճշմարտութեան դէմ ոչ մի եւրոպացի լուսաւորեալ մարդ, բացի գովասանքէ, ոչքնն ուրիշ ասելիք չունի:

Բացաւձ դպրոցը չփակել եւ նորերը ըստ կարելոյն բանալ. ո՛րքան մարդասիրական դպացմունք, որպիսի խորունկ եւ հեռատես ազգասիրութիւն, ո՛րպիսի մահաբեր հարւած տգիտութեան եւ մարդկային բազմատեսակ թշւառութեան. ո՛րպիսի հուժկու օղնութիւն մարդկութեան բարեկամներին...

Հաւատացնում եմ Ձեզ, ազնիւ բարեկամ, որ եթէ մեր վեհոր իւր կեանքի մէջ ոչինչ եւ ոչինչ արած չլինէր, այլ իւր եօթանասնամեայ հասակումն միայն այդ մեծիմաստ խօսքն ասած լինէր, նաեւ ա՛յն ժամանակ եւրոպական ազգը նորան արձան կը կանգնեցընէր եւ վրան կը գրէր՝ «եղած դպրոցքը չփակել եւ նորը բանալ», ով որ մանկանց առջեւ փակում է դպրոցի դուռը, նա չափահասի առջեւ բացում է բանտի դուռը. այս վաղուցւայ յայտնի ճշմարտութիւնն է: Եւ ի՛նչ... երբ որ դալիս է Ն. Նախիջեւան Մակար Ա. եպիսկոպոսը ըստ գրգման Զառիֆեանին, իսկոյն հրամայում է փակել Լուսաւորչի ծխական դպրոցը եւ միջի 40ի չափ աշակերտներին տանում է ամայացած Հոգ. դպրոցը, իսկ շարած ժողովրդին հրամայում է որ այդ դպրոցի տեղ նոյնհետաւ օրիորդացը պիտի բանայ. իբր թէ տղայոց դպրոցի հաստատում մնալը սաստիկ արգելադրութ էր իզական դպրոցի բացման: Բայց աւա՛ղ, մինը փակւեցաւ, միւս դեռ եւս բացւած չէ. ե՞րբ պիտի բացւի — գիտեն այդ Մակար Ա. եպ. եւ նորա արբանեակ

Զառիֆեանը: Ահա Զառիֆեանի վաղուցայ դադանի խորհուրդը եւ ահա գոված Արքեպիսկոպոս Մակարի խոհեմ եւ իմաստուն վարչութիւնը... Մակար Ա. եպ. ո՛չ միայն սիրելի եւ յարգելի չէ, այլ ճշմարիտը կարող էք իմանալ՝ նա առաւել քան թէ ատելի է, նա ծիծաղելի է ժողովրդի աչքումն: Դուք շատ լաւ գիտէք, որ մարդուն համար ամենավատ վիճակն է աշխարհիս երեսին ծիծաղելի դերը. մարդս ամէն բան կարող է կուլ տալ՝ բամբակ, չարախօսութիւն, դանձի կորուստ, բայց ծաղր՝ երբե՛ք. շատ անգամ բամբակած եւ չարախօսած մարդը նորէն յոտն կը կանգնէ, բայց ծաղր ու ծանակ եղածը՝ երբեք: Այդ՝ հոգեբանական անմրցելի օրէնքն է: Ժողովուրդը դանդատուում է Մակար Ա. եպ. -էն. հոգեւորականք դանդատուում են, կանայք դանդատուում են. որո՞նք, հարցնում եմ, դովոյք. մի՞թէ Սրբադնութիւնդ մի Զարիֆեանի, մի վարդանեանի եւ վերջնոցն 4-5 համախոհներին ընդունում է մի ամբողջ ժողովրդի, մի ամբողջ քաղաքի տեղ...»

Նոր-Նախիջեւան. 1880, 5. մայիսի.

Սրբազան հայր, ագնիւ եղբայր:

«Վաղուց Ձեզ նամակ գրած չեմ, թէեւ գրելու բաներ շատ կային. այս միջոցին մինչեւ անգամ ես աններելի անքաղաքավարութիւն եւս արի Ձեր դէմ, շնորհակալութիւն չանելով այն բարեկամութեան համար, որ Դուք կատարել էք յանուն իմ. գիտեմ այդ ամենը եւ Ձեզանից աւել մեղադրում եմ ինքս ինձի. բոլոր այդ ժամանակը ես չորս կողմս կատարեւոր չարադործութեանց պատճառաւ՝ ապշած, թմբած եւ կարկամած մնացել էի: Բոպէ չէր անցնում, որ ուշքս վրաս դար եւ գրիչս ձեռքս առնելու միջոց եւ պարապ գտնէի, ըսպէ չէր անցնում, որ կեղծաւոր ազգասէրք եւ Աթոռիդ ակներեւ թշնամիք իրեն անձնական շահը ազգայինի տեղ չտալով, չկատարէին միամիտ ժողովրդի առջեւ պէսպէս յենածութիւններ... Խեղքս գլխէս թռչում է, թէ մարդկային նենդութիւնը եւ խորամանկութիւնը մինչեւ ո՞ր աստիճան կարող է հասնել... Պետերբուրգ, Իիշիւնեւ եւ Նախիջեւան իրար անցնում էին եւ անցնում են: Սրբազան հայր, կան բաներ, որ կարելի է եւ պէտք է միայն երես առ երես ասել, ներկայ դրութեան մէջ, սուր թշնամիք հնար ունին կնքած նամակներ բանալու, թղթաբերն կաշտուելու, հեռագրի իմաստը փոխելու. գրաւոր հազորդակցութիւնը գեղեցիկ գործիք է չարերուն իրանց վաս նպատակներին հասնելու: Իմաստունին այսքան բաւ է...»

Մեր տեղը զգուշաւոր մարդը սիրողներ կունենայ, բայց

հետևեալ շատ սակաւ: Վախենում եմ, որ վեհափառը իւր զգուշութեամբ եւ խոհեմութեամբ իւր զօրութիւնը կը տեղափոխէ Բիշինեւ, ուր ներգործում են աւելի համարձակ...

Ի սէրն Աստուծոյ, ներշնչեցէք վեհափառին մի փոքր քաջութիւն որ իր զօրութիւնը գործադրելի: Էջմիածնայ վարկը օրէ օր ստորանում է շնորհօք նոցա, որոնք վայելում են եւ նրա տւած հացը եւ հովանաւորութիւնը: Ի դէպս՝ Սուքիաս եպիսկոպոսը այստեղ է եւ, ասում են, վիճակային շէնքի համար փող պիտի ժողովէ: Որքան ես կարողացայ հասկանալ, թէ սա եւ թէ սորա հովանաւորը որոնում են ազգի թոյլ տամարները, քան թէ իսկական օգուտը. միամիտները կարծում են թէ մեծամեծներին աղա՛, աղա՛ ասելուց, նոցա դրպանները պիտի բացւին: Չգիտեն որ՝ նոցա շրջապատած սուտ աղաները ինքեանք եկեղեցիների եւ քաղաքի արդիւնքները լիզելով են ապրում...

Յայտնեմ Ձեզ, որ այս օրերս կատանաք քանի մի մարդոցմէ խնդրե՛ր՝ տպարանը ինձ յանձնելու իմաստուց: Ես ամենախոնարհաբար կը խնդրեմ Սրբազնութիւնդ անյապաղ կատարել. մանաւանդ շտապել թողլէպէնի թոյլտուութիւնը ստանալու:

Պէտք է դուք այստեղ օրինաւոր դպրանոց կամ սեմինարիայ հիմնէք. փողի պակասութիւն չի լինիլ: Նոր Նախիջեան այսօր 100 աշակերտէն աւելի օտար քաղաքներ է ուղարկել, որոնց համար աւելի քան տաս հազար մանէթ է մտնում. նախիջեանցին տասնապատիկ աւելի հարուստ է, քան թէ դուք կարծում էք»:

Ձերդ Ռ. Պատկանեան

Իր ժամանակին Նոր Նախիջեանի քաղաքային խորհուրդը քաղաքի հարիւրամեակի առթիւ՝ որոշել էր հիմնել Արհեստաւորաց Դպրոց հայ աշակերտների համար. եւ ահա 1881թ. նոյն խորհուրդը ի յարգանս իր հայրենակից բանաստեղծի մանկավարժական գործունէութեան ընտրում է նրան նոր բացած Արհեստաւորաց Դպրոցի տեսուչ: Այդ օրից վերջ է տրւում Ռ. Պատկանեանի ու նրա հակառակորդների պայքարին, որ տեւել էր մի քանի տարի: Այդ շրջանից Ռ. Պատկանեանը ցերեկները դրադուում է իր նոր դպրոցի կեանքով, իսկ երեկոները նւիրում արձակ վիպագրութեան եւ կարճ ժամանակայ մէջ հրատարակում է 6-7 վէպ, որոնց մէջ առաջին անգամ հայ գրականութեան մէջ հրատարակ է գալիս հայ քաղաքացի ունեւոր դասի կեանքն ու կենցաղը, ինչպէս եւ քաղաքում ապրող հայ մտաւորականի հոգեբանութիւնն ու մտորումները:

Փարիզ